

Մեկ մասնակից ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ փակ ընկերությունների մասին ընկերությունների իրավունքի ոլորտի՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի 2009/102/ԵՀ հրահանգ (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

*Պաշտոնական տեղեկագիր L 258, 01.10.2009թ., էջեր 0020 - 0025*

Մեկ մասնակից ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ փակ ընկերությունների մասին ընկերությունների իրավունքի ոլորտի՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի 2009/102/ԵՀ հրահանգ

(կողմիֆիկացված տարբերակ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 44-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի եզրակացությունը [1],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան [2],

Քանի որ

1) «Մեկ մասնակից ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ փակ ընկերությունների մասին» ընկերությունների իրավունքի ոլորտում Խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 21-ի 89/667/ԵՏՀ տասներկուերորդ հրահանգը [3] մի քանի անգամ ենթարկվել է էական փոփոխությունների [4]: Հստակության և ռացիոնալության նկատառումներից ելնելով՝ նշված Հրահանգը պետք է կողմիֆիկացվի,

2) որոշ երաշխիքներ, որոնք մասնակիցների և այլոց շահերի պաշտպանության նպատակով անդամ պետությունները պահանջում են ընկերություններից և ֆիրմաներից՝ Պայմանագրի 48-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով, պետք է համաձայնեցվեն՝ Համայնքի տարածքում այդ երաշխիքները համարժեք դարձնելու նպատակով,

3) սույն ոլորտում «Երաշխիքների համաձայնեցման մասին, որոնք մասնակիցների և այլոց շահերի պաշտպանության նպատակով անդամ պետությունները պահանջում են ընկերություններից և ֆիրմաներից՝ Պայմանագրի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով, Համայնքի տարածքում այդ երաշխիքները համարժեք դարձնելու նպատակով» Խորհրդի 1968 թվականի մարտի 9-ի 68/151/ԵՏՀ առաջին հրահանգը [5], «Որոշ տեսակի ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին» Պայմանագրի 54(3)(է) հոդվածի վրա հիմնված՝ Խորհրդի 1978 թվականի հուլիսի 25-ի 78/660/ԵՏՀ չորրորդ

հրահանգը [6] և «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Պայմանագրի 54(3)(է) հոդվածի վրա հիմնված՝ Խորհրդի 1983 թվականի հունիսի 13-ի 83/349/ԵՏՀ յոթերորդ հրահանգը, որոնք համապատասխանաբար վերաբերում են տեղեկությունների բացահայտմանը, պարտավորությունների վավերությանը, գրանցման անվավերությանը, տարեկան ֆինանսական հաշվետվություններին և համախմբված ֆինանսական հաշվետվություններին, կիրառվում են բոլոր բաժնետիրական ընկերությունների նկատմամբ: Այդուհանդերձ, «Երաշխիքների համաձայնեցման մասին, որոնք մասնակիցների և այլոց շահերի պաշտպանության նպատակով անդամ պետությունները պահանջում են ընկերություններից՝ Պայմանագրի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով, սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների ստեղծման և դրանց կապիտալի չափի պահպանման ու փոփոխման հետ կապված, այդ երաշխիքները համարժեք դարձնելու նպատակով» Խորհրդի 1976 թվականի դեկտեմբերի 13-ի 77/91/ԵՏՀ երկրորդ հրահանգը [8], «Սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլումների վերաբերյալ» Պայմանագրի 54(3)(է) հոդվածի վրա հիմնված՝ Խորհրդի 1978 թվականի հոկտեմբերի 9-ի 78/855/ԵՏՀ չորրորդ հրահանգը [9] և «Սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների բաժանման վերաբերյալ» Պայմանագրի 54(3)(է) հոդվածի վրա հիմնված՝ Խորհրդի 1982 թվականի դեկտեմբերի 17-ի 82/891/ԵՏՀ վեցերորդ հրահանգը [10], որոնք, համապատասխանաբար, վերաբերում են ստեղծմանը և կապիտալին, միաձուլումներին և բաժանումներին, կիրառվում են միայն սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ,

4) անհրաժեշտ է Համայնքի տարածքում ստեղծել անհատ ձեռնարկատիրոջ պատասխանատվության սահմանափակում նախատեսող իրավական փաստաթուղթ՝ չհակասելով անդամ պետությունների այն օրենքներին, որոնք բացառիկ հանգամանքներում պահանջում են, որ ձեռնարկատերը պատասխանատվություն կրի իր ձեռնարկության պարտավորությունների համար,

5) սահմանափակ պատասխանատվությամբ փակ ընկերությունը կարող է լինել մեկ մասնակից ունեցող ընկերություն՝ իր ստեղծման պահից կամ կարող է այդպիսին դառնալ, երբ դրա բաժնետոմսերի սեփականատեր է դառնում մեկ բաժնետեր: Մինչ խմբերին վերաբերող ազգային օրենքների դրույթների համաձայնեցումը՝ անդամ պետությունները կարող են որոշակի հատուկ դրույթներ և պատժամիջոցներ սահմանել այն դեպքերի համար, երբ ֆիզիկական անձը մի քանի ընկերությունների միակ մասնակիցն է, կամ մեկ մասնակից ունեցող ընկերությունը կամ ցանկացած այլ իրավաբանական անձ որևէ ընկերության միակ մասնակիցն է: Այս լիազորության միակ նպատակը որոշ ազգային օրենքների միջև առկա տարբերությունները հաշվի առնելն է: Այդ նպատակով անդամ պետությունները կարող են որոշակի դեպքերում սահմանափակումներ նախատեսել մեկ մասնակից ունեցող ընկերությունների կիրառման վերաբերյալ կամ վերացնել միակ մասնակցի պատասխանատվության սահմանափակումները: Անդամ պետություններն ազատ են սահմանելու այն ռիսկերը կարգավորող կանոնները, որոնք կարող են ներկայացնել մեկ մասնակից ունեցող ընկերությունները՝ մեկ մասնակից ունենալու հետևանքով, մասնավորապես, տեղաբաշխված կապիտալի վճարումն ապահովելու համար,

6) այն փաստը, որ բոլոր բաժնետոմսերի սեփականատեր է դարձել մեկ բաժնետեր, ինչպես նաև միակ մասնակցի ինքնությունը պետք է բացահայտվի հանրության համար՝ մատչելի գրանցամատյանում գրառում կատարելով,

7) ընդհանուր ժողովի լիազորություններն իրականացնող միակ մասնակցի ընդունած որոշումները պետք է գրավոր արձանագրվեն,

8) միակ մասնակցի և իր կողմից ներկայացվող իր ընկերության միջև կնքվող պայմանագրերը նույնպես պետք է գրավոր արձանագրվեն, եթե այդ պայմանագրերը չեն վերաբերում բնականոն պայմաններում կատարվող ընթացիկ գործողություններին,

9) սույն Հրահանգը չպետք է հակասի II հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխատեղելու և դրանք կիրառելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### ***Հոդված 1***

Սույն Հրահանգով սահմանված համաձայնեցման միջոցները կիրառվում են I հավելվածում նշված ընկերությունների տեսակներին վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի նկատմամբ:

### ***Հոդված 2***

1. Ընկերությունը կարող է մեկ մասնակից ունենալ ստեղծման պահին, ինչպես նաև այն դեպքում, երբ դրա բոլոր բաժնետոմսերի սեփականատեր է դառնում մեկ անձ (մեկ մասնակից ունեցող ընկերություն):

2. Անդամ պետությունները կարող են, մինչև խմբերին վերաբերող ազգային օրենքների համաձայնեցումը, սահմանել հատուկ դրույթներ կամ պատժամիջոցներ այն դեպքերի համար, երբ

ա) ֆիզիկական անձը մի քանի ընկերությունների միակ մասնակիցն է, կամ

բ) մեկ մասնակից ունեցող ընկերությունը կամ ցանկացած այլ իրավաբանական անձ որևէ ընկերության միակ մասնակիցն է:

### ***Հոդված 3***

Երբ ընկերությունը դառնում է մեկ մասնակից ունեցող ընկերություն այն պատճառով, որ դրա բոլոր բաժնետոմսերի սեփականատեր է դառնում մեկ անձ, այդ փաստը, ինչպես նաև միակ մասնակցի ինքնությունը պետք է գրանցվեն գործի մեջ կամ գրառվեն գրանցամատյանում՝ 68/151/ԵՏՀ հրահանգի 3(1) և (2) հոդվածի իմաստով, կամ գրառվեն ընկերության կողմից վարվող և հանրությանը մատչելի գրանցամատյանում:

### ***Հոդված 4***

1. Միակ մասնակիցն իրականացնում է ընկերության ընդհանուր ժողովի լիազորությունները:

2. Առաջին պարբերության մեջ նշված լիազորություններն իրականացնելիս միակ մասնակցի ընդունած որոշումները արձանագրվում կամ գրավոր են ձևակերպվում:

### ***Հոդված 5***

1. Միակ մասնակցի և իր կողմից ներկայացվող իր ընկերության միջև կնքված պայմանագրերն արձանագրվում կամ գրավոր են ձևակերպվում:
2. Անդամ պետությունները կարող են 1-ին պարբերությունը չկիրառել բնականոն պայմաններում կատարվող ընթացիկ գործողությունների նկատմամբ:

### ***Հոդված 6***

Եթե անդամ պետությունը թույլատրում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունը լինի 2(1) հոդվածով սահմանված մեկ մասնակից ունեցող ընկերություն, ապա սույն Հրահանգը կիրառվում է:

### ***Հոդված 7***

Անդամ պետությունը կարող է չթույլատրել մեկ մասնակից ունեցող ընկերության ստեղծումն այն դեպքերում, երբ իր օրենսդրությունը նախատեսում է, որ անհատ ձեռնարկատերը կարող է ստեղծել ձեռնարկություն, որի պատասխանատվությունը սահմանափակվում է սահմանված որևէ գործունեության համար ներդրվող գումարի չափով՝ պայմանով, որ նման ձեռնարկությունների համար նախատեսվեն սույն Հրահանգով կամ 1-ին հոդվածում նշված ընկերությունների նկատմամբ կիրառվող Համայնքի այլ դրույթներով սահմանված համարժեք երաշխիքներ:

### ***Հոդված 8***

Անդամ պետությունները Հանձնաժողով են փոխանցում ազգային իրավունքի այն հիմնական դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

### ***Հոդված 9***

II հավելվածի Ա մասում նշված ակտերով փոփոխված 89/667/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով II հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու և դրանք կիրառելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած հրահանգին արված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին արված հղումներ և պետք է ընթերցվեն ըստ III հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի:

### ***Հոդված 10***

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակմանը հաջորդող 20-րդ օրը:

**Հոդված 11**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2009 թվականի սեպտեմբերի 16-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Ժ. Բուզեկ

Խորհրդի կողմից՝

Նախագահ Կ. Մալմստրյոմ

[1] ՊՏ C 77, 31.03.2009թ., էջ 42:

[2] Եվրոպական պառլամենտի 2008 թվականի նոյեմբերի 18-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռևս չի հրապարակվել) և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի որոշում:

[3] ՊՏ L 395, 30.12.1989թ., էջ 40:

[4] Տե՛ս Հավելված II, մաս Ա:

[5] ՊՏ L 65, 14.03.1968թ., էջ 8:

[6] ՊՏ L 222, 14.08.1978թ., էջ 11:

[7] ՊՏ L 193, 18.07.1983թ., էջ 1:

[8] ՊՏ L 26, 31.01.1977թ., էջ 1:

[9] ՊՏ L 295, 20.10.1978թ., էջ 36:

[10] ՊՏ L 378, 31.12.1982թ., էջ 47:

-----

## ՀԱՎԵԼՎԱԾ I

1-ին հոդվածում նշված ընկերությունների տեսակները

- Բելգիա՝

«la société privée à responsabilité limitée//besloten vennootschap met beperkte aansprakelijkheid»,

- Բուլղարիա՝

«дружество с ограничена отговорност, акционерно дружество»,

- Չեխիայի Հանրապետություն՝

«společnost s ručením omezeným»,

- Դանիա՝

«anpartsselskaber»,

- Գերմանիա՝

«Gesellschaft mit beschränkter Haftung»,

- Էստոնիա՝

«aktsiaselts, osaühing»,

- Իռլանդիա՝

«private company limited by shares or by guarantee»,

- Հունաստան՝

«εταιρεία περιορισμένης ευθύνης»,

- Իսպանիա՝

«sociedad de responsabilidad limitada»,

- Ֆրանսիա՝

«société à responsabilité limitée»,

- Իտալիա՝

«società a responsabilità limitata»,

- Կիպրոս՝

«ιδιωτική εταιρεία περιορισμένης ευθύνης με μετοχές ή με εγγύηση»,

- Լատվիա՝

«sabiedrība ar ierobežotu atbildību»,

- Լիտվա՝

«uždaroji akcinė bendrovė»,

- Լյուքսեմբուրգ՝

«société à responsabilité limitée»,

- Հունգարիա՝

«korlátolt felelősségű társaság, részvénytársaság»,

- Մալթա՝

«kumpannija privata/Private limited liability company»,

- Նիդերլանդներ՝

«besloten vennootschap met beperkte aansprakelijkheid»,

- Ավստրիա՝

«Aktiengesellschaft, Gesellschaft mit beschränkter Haftung»,

- Լեհաստան՝

«spółka z ograniczoną odpowiedzialnością»,

- Պորտուգալիա՝

«sociedade por quotas»,

- Ռումինիա՝

«societate cu răspundere limitată»,

- Սլովենիա՝

«družba z omejeno odgovornostjo»,

- Սլովակիա՝

«spoločnosť s ručením obmedzeným»,

- Ֆինլանդիա՝

«osakeyhtiö/aktiebolag»,

- Շվեդիա՝

«aktiebolag»,

- Միացյալ Թագավորություն՝

«private company limited by shares or by guarantee»,

-----

## ՀԱՎԵԼՎԱԾ II

### ՄԱՍ Ա

Ուժը կորցրած ճանաչված հրահանգն իր հետագա փոփոխությունների ցանկով

(9-րդ հոդվածում նշված)

Խորհրդի 89/667/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 395, 30.12.1989թ., էջ 40) ||

1994 թվականի Անդամակցության մասին ակտի I հավելված, կետ XI.Ա (ՊՏ C 241, 29.08.1994թ., էջ 194) ||

2003 թվականի Անդամակցության մասին ակտի II հավելված, կետ 4.Ա (ՊՏ L 236, 23.09.2003թ., էջ 338) ||

Խորհրդի 2006/99/ԵՀ հրահանգ (ՊՏ L 363, 20.12.2006թ., էջ 137) | Միայն Հավելվածի Ա.4 կետը |

### ՄԱՍ Բ

Ազգային իրավունքում փոխատեղման և կիրառման ժամկետների ցանկը

(9-րդ հոդվածում նշված)

Հրահանգը | Փոխատեղման ժամկետը | Կիրառման ամսաթիվը

89/667/ԵՏՀ | 1991 թվականի դեկտեմբերի 31 | 1993 թվականի հունվարի 1` 1992 թվականի հունվարի 1-ի դրությամբ գոյություն ունեցող ընկերությունների դեպքում |

2006/99/ԵՀ | 2007 թվականի հունվարի 1 |

-----



ՀԱՎԵԼՎԱԾ III  
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ

89/667/ԵՏՀ հրահանգ |Սույն Հրահանգը|

1-ին հոդված, ներածական մաս | 1-ին հոդված|

1-ին հոդված, 1-27-րդ պարբերություններ | Հավելված I|

2-7-րդ հոդվածներ | 2-7-րդ հոդվածներ |

8(1) հոդված | — |

8(2) հոդված | — |

8(3) հոդված | 8-րդ հոդված |

— | 9-րդ հոդված |

— | 10-րդ հոդված |

9-րդ հոդված | 11-րդ հոդված |

— | Հավելված I|

— | Հավելված II|

— | Հավելված III|